ԿԱՐԾԻՔ

ԱՆԻ ՌՈՒԲԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԺԹ. 00.01 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կառավարիչների պատրաստման գործընթացը եղել է և այսօր էլ մնում է տարբեր գիտակարգերի ուսումնասիրության առարկա: Ժամանակակից կառավարման համակարգում կառավարչին ներկայացվող պահանջները ենթարկվել են փոփոխության, այսօր առավել կարևորվում են մասնագիտական կարևոր հոգեբանական որակների առկայությունն ու զարգացվածությունը: Հեղինակն ուշադրություն է հրավիրել ժամանակակից հրամայականների պայմաններում կառավարչական գործունեության առանձնահատկությունների և կառավարչի հոգեբանական որակների համապատասխանության հարցին, ինչը նրա կողմից դիտարկվել է որպես արդյունավետ գործունեության և մասնագիտական զարգացման հիմք: Կառավարչական գործունեությունը հատուկ պահանջներ է ներկայացնում կառավարչի հոգեբանական որակներին: Կառավարիչների մասնագիտական պատրաստման գործընթացում մասնագիտական կարևոր հոգեբանական որակների դրսևորումների և շարժընթացի վերաբերյալ հետազոտությունների սակավությունը, ինչպես նաև արդի պայմաններում զարգացող հասարակության կողմից ներկայացվող պահանջներով պայմանավորված դրանց կարևորությունը, ատենախոսի կողմից ներկայացվել են որպես ատենախոսության թեմայի արդիականությունը և ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորող գործոններ: Արագընթաց փոխակերպումների ժամանակաշրջանում կառավարչի գործունեության իրականացման տեսանկյունից սույն աշխատանքում կարևորվում է մասնագիտական կարևոր հոգեբանական որակների առկայությունը և այդ որակների զարգացման համար պլանավորված գործողությունների իրականացումը: Տվյալ ոլորտում առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք, սակայն, առավելապես առնչվում են

հանրային ծառայողների տարաբնույթ ուսումնասիրություններին: Մասնագիտական ուսուցման գործընթացում կառավարչական հոգեբանական որակների զարգացման նախապայմանների, ինչպես նաև ուսուցման գործընթացում այդ որակների շարժընթացի ու մասնագիտական կրթական ծրագրի հետ դրանց փոխազդեցության վերաբերյալ հետազոտությունները բացակայում են: Այս առումով ատենախոսի կողմից իրականացված հետազոտական աշխատանքն արդիական ու կարևոր է, քանի որ կարող է հիմք հանդիսանալ կառավարիչների պատրաստման նոր հայեցակարգային դրույթների մշակման համար:

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական և փորձարարական մասերից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության տեսական վերլուծությունները ներառում են հիմնախնդրին վերաբերող գիտական գրականության մեջ առկա մոտեցումները՝ հիմք ընդունելով կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակների շարժընթացի առանձնահատկությունները: Ատենախոսության հիմքում ընկած են կառավարչի անձնային առանձնահատկությունների հայեցակարգերը (Յու. Վ. Սինյագին, Ֆ. Ֆիդլեր, Վ. Մ. Շեպել, Մ. Շոու, Մ. Վուդկոկ, Դ. Ֆրենսիս), մասնագիտական գործունեությանն անձի համապատասխանության խնդրի վերաբերյալ գիտական հայեցակարգերը (Վ. Ա. Բոդրով ու Ե. Ա. Կլիմով), ինչպես նաև մասնագետի անձնային որակների զարգացման մոտեցումները (Դ. Շադրիկով, Տ. Կուդրյավցև, Կ. Աբուլխանովա-Սլավսկայա, Յու. Պովարենկով, Ե. Կլիմով): Ատենախոսության տեսական հիմքում ատենախոսը դիտարկում է կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակների վերաբերյալ տեսություններն ու հետազոտությունները, մասնագիտական գործունեությանն անձի համապատասխանության խնդրի վերաբերյալ վերը նշված գիտական մոտեցումները, ինչպես նաև մասնագետի անձնային որակների զարգացման մոտեցումները:

Ատենախոսի կողմից տեսական վերլուծությունն իրականացված է համապարփակ, գրականության ցանկում ընդգրկված գիտական աղբյուրները համապատասխանում են ներկայացվող պահանջներին, առկա են տրամաբանական ընդհանրացումներ ու վերլուծություններ, ինչը հնարավորություն է ընձեռել նրան առաջադրել յուրատիպ ու նորովի մոտեցում հիմնախնդրին՝ առաջադրելով ենթադրություն այն մասին, որ կառավարչների

մասնագիտական զարգացումն ապահովող հոգեբանական որակների շարժընթացը պայմանավորված է դրանց յուրահատուկ համադրությամբ, այն է՝ հուզական ինտելեկտ, մտածողություն, կամային ինքնակարգավորում, սոցիալ-հաղորդակցման կոմպետենցիա: Այդ որակների շարժընթացը մասնագիտական զարգացման գործընթացում պայմանավորված է մասնագիտական կրթական ծրագրերում հոգեբանական բաղադրիչների առկայությամբ: Այս ուղղությամբ իրականացվել է ծավալուն և հանգամանալից հետազոտական աշխատանք: Հետազոտական ընտրանքում ընդգրկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարչական տարբեր մասնագիտությունների 300 մագիստրանտներ: Մագիստրանտների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ անձնային որակների զարգացումը տեսանելի է դառնում կառավարիչների պատրաստման գործընթացում: Կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների շարժընթացը ցույց է տրվում կրթական ծրագրերի յուրացման գործընթացին զուգահեռ: Որպես փորձագետ հանդես են եկել պետական կառավարչական պաշտոնում տաս և ավել տարվա փորձ ունեցող 50 կառավարիչներ:

Հետազոտությունն իրականացվել է փորձարարական հոգեբանության ոլորտում առկա գիտական հետազոտություններին ներկայացվող պահանջներին համապատասխան՝ հնգափուլ ստորակարգությամբ, որը նոր մոտեցում է հիմնախնդրին, և վերջնարդյունքները կարող են հիմք հանդիսանալ կառավարիչների պատրաստման ու վերապատրաստման, այդ ոլորտում նոր հայեցակարգային դրույթների մշակման ու կիրարկման համար:

Անհրաժեշտ է փաստել, որ ատենախոսի հետազոտության հաջողության գրավականը ճիշտ ընտրված և կիրթ կիրառված մեթոդական ապարատն է, ինչը հնարավորություն է ընձեռել ուսումնասիրել կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների շարժընթացն ապահովող գործոնները և դրանց հարաբերակցությունը: Փորձարարական հետազոտության արդյունքում ստացված բոլոր տվյալները ենթարկվել են վիճակագրական և հոգեբանական հիմնարար ու հարուստ վերլուծության, ձևակերպվել են գիտական արժեք ներկայացնող հստակ եզրակացություններ, որոնք ամփոփում են աշխատանքի հիմնական արդյունքները:

Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի ընթացիկ նիստերում, «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիայի նիստերում, ՀՀ և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, սեմինար-քննարկումներում:

Ատենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական բովանդակությունն ու դրույթները:

Այդուհանդերձ, ատենախոսության մեջ առկա են որոշակի թերություններ: Մասնավորապես՝

➢ Աշխատանքի ներածության «Հետազոտության մեթոդները և մեթոդիկաները» բաժնում ներկայացված են միայն փորձարարական հետազոտության մեթոդները, իսկ կիրառված մեթոդիկաների մասին տեղեկատվություն ներառված չէ:

➢ Աշխատանքում առկա են ձևակերպումներ, որոնցից պարզ չէ, թե ովքեր են տվյալ ձևակերպումների հասցեատերը (օրինակ՝ ատենախոսության 7-րդ էջի 6-րդ կետերում և ենթավարկածում հստակ ձևակերպված չէ, թե ո՞ր մասնագիտական կրթական ծրագրերի մասին է խոսքը): Միաժամանակ, աշխատանքի ինչպես տեսական, այնպես էլ հետազոտական մասում առկա են բազմաթիվ ձևակերպումներ մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ, սակայն հստակ ներկայացված չէ, թե ո՞վքեր են հանդիսանում այդ կրթական ծրագրերի յուրացնողը:

➢ Ատենախոսության 8-րդ էջում նշված է, որ հոգեբանական որակը դառնում է համակարգաստեղծ, ինչը միանշանակ չէ, քանի որ միայն հոգեբանական որակն անձի կառուցվածքում չի կարող համակարգաստեղծ լինել, կարող է դիտարկվել որպես այդ գործոններից մեկը:

➢ Ախատանքի 8-րդ էջում խոսվում է այն մասին, որ տեսա-մեթոդաբանական հիմքում ընկած է երկու հասկացությունների հետևյալ մեկնաբանումը՝ մասնագիտական զարգացումը դա կարիերան է, իսկ մասնագիտական կայացումն արդյունավետ կառավարումն է: Այս համատեքստում լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի, թե ինչ սկզբունքով է մասնագիտական կայացումը դիտարկվում որպես արդյունավետ կառավարում:

➢ Իրականացված փորձարարական աշխատանքն ավելի շատ արդյունք է պարունակում, քան ներկայացված է եզրակացություններում: Կարելի էր եզրակացություններն առավել ընդգրկուն և հետազոտության արդյունքների ամբողջականությունն ապահովող ձևակերպումների միջոցով ներկայացնել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անի Ռուբիկի Խաչատրյանի «Անձի հոգեբանական որակների շարժընթացը կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում» թեմայով վերտառությամբ ատենախոսությունը լիովին ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք է:

Սույն ատենախոսական աշխատանքը իր բովանդակությամբ, տեսամեթոդական և գիտական վերլուծությունների խորությամբ, գիտական նորույթով ու կիրառականությամբ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսական աշխատանքին ներկայացվող աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին:

Ատենախոսության հեղինակ Անի Ռուբիկի Խաչատրյանն իր գիտական հասունությամբ, ներկայացված համալիր և գիտագործնական մեծ կարևորություն ունեցող ատենախոսության համար արժանի է ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշնոտական ընդդիմախոս՝
հ. գ. դ., պրոֆեսոր Արսեն Բաղդասարի Լոքյան

Ա. Բ. Լոքյանի ստորագրությունը հաստատում եմ.
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար՝
բ. գ. թ. Մերի Հովհաննիսյան

04.01.2024թ.